

**ԱԾԱԿԱՆԱԿԱՆ ՈՐՈՇԻՉԻ ՇԱՐՎԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՉԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԳԵՐՄԱՆԵՐԵՆՈՒՄ**

ՇԱՅԱՆԵ ՆԵՐՄԻՍՅԱՆ

Որոշիչ լրացումները պարզաբանում են նախադասության գոյակա-
նական անդամների որակական և քանակական հատկանիշները: Ինչպես ժա-
մանակակից հայերենում, այնպես էլ գերմաներենում որոշիչը կատարում է
նույն գործառույթը և ունի գրեթե նույն սահմանումը: Որպես որոշիչ երկու լե-
զուներում էլ կարող են հանդես գալ առաջին հերթին հատկանշային իմաստ
արտահայտող բառեր կամ բառախմբեր, այդ թվում՝ ածականը: Որոշիչի շա-
րահասությունը կախված է նրա խոսքիմասային պատկանելությունից, ինչպես
նաև որոշյալի հետ կապակցման ձևից, որը երկու լեզուներում որոշակի ա-
ռանձնահատկություններ է դրսևորում որոշիչի շարահասության տեսակետից:

Ժամանակակից հայերենում ածականական որոշիչ+որոշյալ կապակցու-
թյան մեջ չկա համաձայնեցում, որը հատուկ էր գրաբարին (օրինակ՝ *մեծ տուն*
- *մեծի տան* - *մեծավ տամբ*, *որդի հարազատ* - *որդույ հարազատի* - *որդուլ
հարազատաւ* և այլն), այլ առկա է հիմնականում առդրություն, քանի որ, ի
տարբերություն գրաբարի, ածականը ժամանակակից հայերենում չի թեքվում
(*ընդարձակ սենյակ-ընդարձակ սենյակի-ընդարձակ սենյակից*): Իսկ ժամանա-
կակից գերմաներենում ածականը գոյականական անդամի հետ համաձայ-
նում է թվով և հոլովով՝ հանդես բերելով նաև մի քանի հոլովատիպ (*breites
Zimmer, breiten Zimmers, breitem Zimmer*): Գերմաներենում, ի տարբերություն
հայերենի, հոդը հանդես է գալիս առանձին բառով (*der, die, das, ein, eine*) և
դրվում է գոյականից առաջ՝ ցույց տալով նրա սեռը, թիվը և հոլովը: Իսկ ա-
ծականի համար ըստ այդմ տարբերում են *որոշյալ հոդից հետո, անորոշ հո-
դից հետո* և *առանց հոդի գործածության* հոլովման տիպերը: Այս հանգաման-
քը առաջ է բերում շարահասական մի շարք յուրահատկություններ:

Երկու լեզուներում էլ ածականական որոշիչը կարող է լինել ինչպես նա-
խադաս, այնպես էլ հետադաս: Ածականը որոշիչ պաշտոնում, բնականաբար,
հանդես է գալիս իր տեսակներով՝ որակական, հարաբերական, որոնք շա-
րահասման ժամանակ ի հայտ են բերում մի շարք առանձնահատկություններ:

Չայերենում սովորական կամ ուղիղ շարահասությամբ ածականական ո-
րոշիչները հիմնականում նախադաս են: Օրինակ՝ *Տարօրինակ սովորություն
ունի Օհան պապը* (ՎՊ, էջ 97): *Ես պարզապես ուզում էի անցնել նրա պատու-
հանի տակով ու սուլել դպրոցական օրերի մի հին եղանակ* (ՎՊ, էջ 101):
*Դրսում խավար չէր, պարզ երկնքից աստղերը նայում էին ճերմակ ձյան սա-
վանին ու ցրում մութը* (ՎԱ, էջ 134):

Մի քանի ածականական որոշիչների դեպքում, եթե նրանք համասեռ են,
ապա շարահասությունը իրար նկատմամբ ազատ է (*մեծ ու լայն փողոց կամ
լայն ու մեծ փողոց*, ինչպես նաև *մեծ, լայն փողոց*), իսկ անհամասեռ լինելու
դեպքում, այսինքն՝ եթե առկա են որակական և հարաբերական ածականներ,

ապա գոյականից անմիջապես առաջ դրվում է հարաբերականը, այնուհետև որակականը, որը կախված է հենց հարաբերական ածականների բնույթից: Օրինակ՝ «Լեռնային մեղ շավիղները, որոնցով միայն գրաստներն էին գնում...» (ՎԱ, էջ 440); «... պարզ երևում է առջևից վազող նոխազի լանջի քնական սկզբոտին՝ նրա հողագույն մարմնի վրա» (ՎԱ, էջ 139): Եթե որակական ածականը դրվի հարաբերականից առաջ, ապա այն կվերագրվի հարաբերական ածականին՝ փայլուն պողպատե սուր, այսինքն՝ ոչ թե փայլուն սուր, այլ փայլուն պողպատ, որից պատրաստված է սուրը¹: Սակայն այս կանոնը չի կարող բացարձակ համարվել, քանի որ երբեմն դժվար է հարաբերական և որակական ածականները միմյանցից սահմանազատել (հմմտ. մարդկային, ավելի մարդկային, ամենամարդկային), և հեղինակը սուբյեկտիվորեն կարող է ընտրել այլ շաղաղասություն՝ «Կոնսերվատորիայի ռեկտորի դեմքին մի ժպիտ էր խաղում, մեղմ, բարեկամական մի հեզմանք...» (ՎԱ, էջ 76), իսկ որոշ դեպքերում որակական ածական+հարաբերական ածական+գոյական շարադասություն կարող է լինել նաև, երբ հարաբերական ածականը գոյականի հետ կազմում է մեկ բառային միավոր՝ ապակե աման - գեղեցիկ ապակե աման:

Առանձին դեպքերում, երբ իրար հաջորդում են երկու ածականներ, դրանց շարադասությունը որոշվում է այն բանով, թե որոշիչ-որոշյալ կապակցության մեջ որ կապակցությունն է առաջնային, օրինակ՝

(լուրջ բարեկամական) մտադրություններ,
բարեկամական (լուրջ մտադրություններ):

Այստեղ առաջին որոշիչը լրացնում է կամ հաջորդող որոշիչ-որոշյալ կապակցությանը, կամ հաջորդող որոշչին:

Ըստ Գ. Ջահուկյանի, եթե որոշիչ-որոշյալ կապակցությունը կայուն է կամ տերմինի արժեք ունի, ապա այլ որոշիչները նախորդում են դրան և ստացվում է հետևյալ կառույցը՝ **ածական+(ածական + գոյական)** հերթականությունը՝ **գրական լեզու - արդի գրական լեզու, քերականական կարգ - բուն քերականական կարգ**²:

Եթե գոյականական անդամն ունենում է միաժամանակ և՛ որոշիչ, և՛ հատկացուցիչ լրացում, ապա որոշիչը դրվում է հատկացուցից հետո³, որպեսզի չվերագրվի նրան: Օրինակ՝ «... արևի սպիտակ սկավառակը արդեն բարձրացել է» (ԱԲ, էջ 331): Եթե այս նախադասությունը հետևյալ կերպ ձևակերպենք՝ «...սպիտակ արևի սկավառակը արդեն բարձրացել է», ապա սպիտակ որոշիչը կվերաբերի արևի բառին, այլ ոչ թե սկավառակին:

Գոյականական անդամը կարող է միաժամանակ ունենալ տարբեր խոսքի մասերով արտահայտված որոշիչներ (ածականով, թվականով, դերանունով և այլն), որոնք ունեն որոշակի հաջորդականություն: Եթե այս բոլոր որոշիչները հանդես են գալիս միաժամանակ, ապա որոշյալին ավելի մոտ դիրք է գրավում ածականական որոշիչը, դրան նախորդում է թվականը, իսկ վերջինիս՝ դերանունը, ըստ այդմ՝ ստացվում է հետևյալ հաջորդականությունը⁴. դերա-

¹ Տե՛ս **Խ. Բաղիկյան**, Ժամանակակից հայոց լեզվի շարադասություն (ուսումնական ձեռնարկ), Եր., 2008, էջ 116:

² Տե՛ս **Գ. Ջահուկյան**, Շարահյուսական ուսումնասիրություններ, Եր., 2003, էջ 16:

³ Տե՛ս **Ա. Պապոյան, Խ. Բաղիկյան**, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Եր., 2003, էջ 127:

⁴ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 15:

նուն որոշիչ + թվական որոշիչ + ածական որոշիչ + որոշյալ՝ *այդ հինգ պատկերագարը* գրքերը: Սակայն միշտ չէ, որ այս բոլոր որոշիչները իրացվում են միաժամանակ: Բացի այդ, այս հաջորդականությունը կախված է այս կամ այն խոսքի մասի արտահայտած իմաստից, որով համապատասխան որոշիչը բնորոշում է որոշյալին (իրադրապես, քանակապես, որակապես), և եթե առկա են ածականներ կամ դերանուններ քանակական իմաստով, ապա վերջիններս գրավում են թվականի դիրքը: Բնականաբար, յուրաքանչյուր որոշիչ կարող է ունենալ իր լրացումները, որոնք դրվում են իրենց լրացյալներից առաջ⁵:

Գրական լեզվի հնարավորությունները թույլ են տալիս միևնույն միտքը արտահայտելու այլ նրբերանգներով՝ փոփոխելով նախադասության անդամների դիրքը: Գեղարվեստական գրականության մեջ ավելի հաճախ հանդիպում ենք շրջուն, քան ուղիղ շարահատության դեպքերի⁶: Ածականական որոշիչները հետադաս կիրառվում են հիմնականում հենց գեղարվեստական գրականության մեջ, առավելապես պոեզիայում՝ բանաստեղծական խոսքը ավելի քնարական դարձնելու, հանգավորելու, միատարր հնչերանգը փոխելու և այլ նկատառումներով: Օրինակ՝

ա) Եվ տևում է այս ամենը
Անծայրածիր մի պահ գուցե,
Գուցե *շարաթ մի անսահման*:
Կամ թերևս մի կարճ տարի... (ՊՍ, էջ 191):

բ) Թվում է, թե քո *շրթունքները փակ*
Ուր որ է պիտի բարկությամբ բացվեն... (ՊՍ, էջ 334):

Նախադաս կիրառության դեպքում որոշիչը որոշյալի հետ կազմում է հնչերանգային և իմաստային մեկ ամբողջություն և միշտ հանդես է գալիս իր որոշյալի հետ միասնաբար ու չի տրոհվում, սակայն շրջուն շարահատության դեպքում որոշիչը առանձնանում է որոշյալից հնչերանգային դադարներով կամ տրոհվում է համապատասխան կետադրությամբ⁷: Եթե որոշիչը հանդես է գալիս մեկ բառով, ապա այն չի տրոհվում իր որոշյալից (օրինակ՝ *ա* և *բ*), սակայն երբ մեկից ավելի բառերով է արտահայտված, ապա այն տրոհվում է որոշյալից բութով, իսկ համասեռ ածականները միմյանցից՝ ստորակետով: Օրինակ՝ *Չեռվում էրգրումն էր՝ քզկտված, վիրավոր, հիվանդ, առջևում թշնամին էր...* (ՎՊ, էջ 405); *...և կարծես ոչ թե քիչ առաջվա ծեր գեներալն էր, այլ ֆիդայի Անդրանիկը՝ ցահել, ամրապինդ, խենթ* (ՎՊ, էջ 405):

Տրոհման կարիք զգացվում է նաև այն դեպքում, երբ որոշյալը, բացի հետադաս որոշիչներից, ունի նաև նախադաս որոշիչներ կամ հատկացուցիչներ⁸: Օրինակ՝ *«...այլ ծիածան է, կամուրջ, լեռան ճանապարհ՝ դժվար, բայց ազնիվ ու վեհացնող»* (ՎՊ, էջ 483):

⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 16:

⁶ Տե՛ս **Խ. Բաղիկյան**, Ժամանակակից հայերենի պարզ նախադասության շարահատությունը, Եր., 1976, էջ 143:

⁷ Տե՛ս **Ա. Մարության**, Տրոհվող լրացումները արդի հայերենում, Եր., 1975, էջ 27-30:

⁸ Տե՛ս նույն տեղը:

Քանի որ ժամանակակից հայերենում ածականական որոշիչը որոշյալի հետ չի համաձայնում, ապա այն կարող է վերաբերել ինչպես նախորդող, այնպես էլ հաջորդող գոյականին (հատկապես բանաստեղծական խոսքում): Նման դեպքերում շփոթումից խուսափելու համար անհրաժեշտ է որոշիչը որոշյալից անջատել կամ կետադրությամբ, կամ հնչերանգով⁹: Օրինակ՝

Ոսկե **ծովում** այդ ղեղի
Աշնան հերկերն են ծլում... (ՅՍ, էջ 147):

Ժամանակակից գերմաներենում, ինչպես և հայերենում, ածականական որոշիչի համար սովորական է առաջադասությունը, այսինքն՝ այն դրվում է հիմնականում գոյականական անդամից առաջ, ավելի կոնկրետ՝ հոդի (որոշյալ, անորոշ, ժխտական կամ ստացական) և գոյական անդամի միջև, եթե հոդը տվյալ դեպքում առկա է: Այս դեպքում, ինչպես արդեն վերը նշեցինք, ածականը համաձայնվում է իր լրացյալի հետ: Օրինակ՝ Schulze legte sich auf den Bauch und spielte mit der kleinen Katze (EK, 83)՝ «Շուլցեն պառկել էր փորի վրա ու խաղում էր փոքրիկ կատվի հետ», Herr Kasselhuth rauchte eine dicke schwarze Zigarre... (EK, 154)՝ «Պարոն Քասելհութը մի հաստ սև սիգար էր ծխում...»: Գոյականը կարող է հանդես գալ նաև առանց հոդի, և այդ դեպքում ածականական որոշիչն է իր վրա վերցնում հոդի գործառույթները: Օրինակ՝ Überall waren unheimliche Geräusche (KR, 20)՝ «Ամենուրեք արտասովոր ձայների էին», Die Logikerin in mir sah nicht nach links oder rechts: langer Weg, langes Lied (KR, 22)՝ «Իմ մեջ եղած տրամաբանողը չնայեց աջ կամ ձախ. երկար ճամփա, երկար երգ»:

Եթե որոշյալից առաջ դրված է երկու և ավելի թեքված ածականներով արտահայտված որոշիչ, ապա հնարավոր է շարադասման երկու տարբերակ¹⁰:

1. Հաջորդում (Reihung), երբ ածականները իբրև որոշիչ համարժեք կերպով լրացնում են գոյականական որոշյալին: Հաջորդման դեպքում ածականները պատկանում են միևնույն իմաստային դաշտին (կարող են լինել ոչ միայն հոմանիշներ, այլև հակահիշներ), այսինքն՝ նրանք համարժեք, համազոր են, և իրենց որոշյալին արժեքը տարբերվում է միայն նրանով, որ գոյականին ամենամոտ գտնվող ածականի իմաստը ավելի մասնավոր է (spezifisch), քան նրան նախորդողը: Բացի այդ՝ հաջորդման ժամանակ ածականների շարադասությունը ավելի շուտ զուտ ոճական սկզբունքով է կատարվում, քան քերականական կանոնով, իսկ ավելի հաճախ այստեղ դեր է խաղում ածական բառի երկարությունը (ավելի երկար կամ ավելի շատ վանկերից բաղկացած ածականները գոյականին ավելի մոտ են դրվում)¹¹: Օրինակ՝ ein Teller mit frischen, knusprigen Brötchen՝ «քարմ, խրթխրթան հացով փսես»: հաջորդումը ստացվում է հետևյալ կերպ՝ ընդհանուրից դեպի ավելի մասնավոր, կարճից՝ երկար: Այս դեպքում վերջիններս տրոհվում են ստորակետով, կամ, ինչպես հայերենում, կարող են իրար միանալ համապատասխան շաղկապներով: Որոշ դեպ-

⁹ Տե՛ս **Խ. Բաղիկյան**, Ժամանակակից հայերենի պարզ նախադասության շարադասությունը, էջ 144:

¹⁰ Տե՛ս «Duden 4, Grammatik», Mannheim, 2005, էջ 841:

¹¹ Տե՛ս **H. Weinrich**, Textgrammatik der deutschen Sprache, Hildesheim, 2005, էջ 523-524:

քերում տրոհումը կարող է ունենալ նաև իմաստատարբերակիչ դեր: Օրինակ՝ Der Wissenschaftler macht weitere, interessante Versuche/ Der Wissenschaftler macht weitere und interessante Versuche՝ «Գիտնականն անում է ևս մի քանի (լրացուցիչ) հետաքրքիր փորձեր»: Այստեղ տրոհումը նշանակում է, որ գիտնականը անում է մի շարք նոր փորձեր, բայց այս անգամ՝ հետաքրքիր:

2. Աստիճանավորում (Stufung), երբ առաջին ածականը վերաբերում է հաջորդող ածական+գոյական կապակցությանը: Այս դեպքում առկա են տարբեր իմաստային դաշտերին պատկանող ածականներ, որոնք, բնականաբար, հավասարազոր չեն որոշյալի նկատմամբ, այլ ի հայտ են գալիս աստիճանավորված: Օրինակ՝ viele nette alte Damen՝ «շատ հաճելի տարեց կանայք»: Այստեղ viele ածականը որոշում է հաջորդող nette alte Damen կապակցությանը, իսկ nette ածականը՝ հաջորդող alte Damen կապակցությանը¹²: Այս դեպքում ածականները չեն տրոհվում: Օրինակ՝ Der Wissenschaftler macht weitere interessante Versuche նախադասությունը առանց տրոհման նշանակում է, որ գիտնականն անում է մի շարք հետաքրքիր փորձեր: Եթե որոշյալի հետ դրվում են մի քանի ածականական որոշիչներ, ապա դրանց հերթականությունը որոշվում է ածականների իմաստով, ըստ այդմ՝ ունենում ենք ածականների հետևյալ դասավորությունը. քանակական ածականներ (ander, weiter, zahllos, einzig), հարաբերական ածականներ՝ տարածական կամ ժամանակային նշանակությամբ (damalig, heutig, dortig, link), որակական ածականներ (groß, dick, dünn, blau), հարաբերական ածականներ, որոնք նյութական իմաստ են արտահայտում (silbern, golden, wollen), սերում, ծագում կամ բնագավառ ցուց տվող հարաբերական ածականներ (schulisch, armenisch)¹³: Սակայն թվարկված բոլոր ածականները, բնականաբար, միաժամանակ միասին հանդես չեն գալիս: Օրինակ՝ die einzige dortige gute Information՝ «այնտեղի միակ լավ տեղեկությունը», ein anderes neues seidenes Modell՝ «մեկ այլ նոր մետաքսե նմուշ»: Ինչպես տեսնում ենք, շարադասման այս երկու սկզբունքներն էլ առկա են նաև հայերենում:

Անհրաժեշտ է նշել նաև, որ գերմաներենում մի քանի բառերով կամ բառակապակցություններով արտահայտված որոշիչ դեպքում որոշյալին անմիջապես մոտ է դրվում ածականը (կամ ածականին համարժեք դերբայները՝ Partizip I և II)՝ որպես ամենակարևոր որոշիչ, այսինքն՝ ածականով արտահայտված որոշիչը ծավալելու դեպքում մյուս լրացումները դրվում են ածականից առաջ (այսպիսի ծավալված որոշիչներով որոշյալները հատկապես բնորոշ են մասնագիտական (պաշտոնական գրագրություն, օրենքներ) և գիտական ոճին¹⁴: Օրինակ՝

eine	Frau
eine	<u>interessante</u> Frau
eine	<u>recht interessante</u> Frau
eine	<u>ausgesprochen recht interessante</u> Frau

¹² Տե՛ս H. Weinrich, նշվ. աշխ., էջ 525:
¹³ Տե՛ս Duden 4, նշվ. աշխ., էջ 348:
¹⁴ Տե՛ս H. Weinrich, նշվ. աշխ., էջ 356:

Նախադաս կարող են լինել նաև չթեքված ածականները, որոնք հանդես են գալիս որոշակի դեպքերում. (1) կայուն կապակցություններում, (2) որոշ (զույն ցույց տվող, մակբայական) ածականների, (3) հատուկ անուններից ու թվականներից -er վերջածանցով կազմված ածականների, ինչպես նաև viel/wenig, welch, solch չթեքվող ածականների դեպքում¹⁵: Օրինակ՝

(1) auf *gut* Glück՝ «պատահականորեն», *kölnisch* Wasser՝ «Քյոլնի ջուր», von *halb* Deutschland՝ «կես Գերմանիան», unser *täglich* Brot՝ «մեր հանապազօրյա հացը», *Gut* Ding will Weile haben՝ «Լավ գործը ժամանակ է պահանջում» և այլն: Չթեքված ածականները՝ որպես նախադաս որոշիչ, բացի կայուն կապակցություններից մեծ կիրառություն են ունեցել հատկապես 19-րդ դ. քնարերգության մեջ (Գյոթե, Շիլլեր, Ֆալլադա և ուրիշներ), և գեղարվեստական գրականության մեջ առհասարակ: Օրինակ՝ Sie fehlte ja; mein *emsig* Tun und Streben... «Չկար միայն նա. մեր ժրաջան գործն ու ձգտումը» (WG, 111), (պետք է լինի՝ mein *emsiges* Tun und Streben); Durch ein *feurig* Mal (պետք է լինի՝ Durch ein *feuriges* Mal) (TM, 109): Բացի այդ, նույն կերպ ածականները կարող են հանդես գալ հատուկ անունների հետ՝ կազմելով մեկ ամբողջություն (նաև որպես բարդ բառ - *Neuruppin*): Օրինակ՝ das alte Berlin → *Alt-Berlin*, *Schwäbisch* Gmünd, *Neu* Isenburg և այլն:

(2) ein *rosa* Kleid, eine *lila* Bluse, eine *prima* Arbeit և այլն;

(3) der *Kölner* Dom, *Ulmer* Münster, die *Berliner* Universität, in *achtziger* Jahren և այլն:

Ածականների նման կիրառումը կարող է ունենալ մի քանի պատճառներ և բացատրվել տարբեր կերպ. կամ ռիթմի պահպանման համար հոլովի ցուցիչը ընկնում է (unser *täglich* Brot gib uns... «մեր հանապազօրյա հացը տուր մեզ»), կամ կան զույն ցույց տվող ածականներ, որոնք ընդհանրապես չեն հոլովվում, կամ ածականներ, որոնք ավելի հաճախ կիրառվում են որպես ստորոգելիական վերադիր (*lila*, *rosa*, *beige*, *prima*, *super* և այլն), իսկ -er-ով տեղանուն ցույց տվող ածականները նախկինում եղել են հոգնակի թվով հատկացուցիչներ (der Dom der *Kölner* → der *Kölner* Dom, այսինքն՝ «քյոլնեցիների տաճարը», այժմ՝ Քյոլնի տաճարը), կամ էլ պատճառ կարող է հանդիսանալ մեծատառով գրությունը (*Alt Wien*)¹⁶:

Ինչպես հայերենում, այնպես էլ գերմաներենում ածականական որոշիչը կարող է նաև հետադասվել: Եթե ածականական որոշիչը հետադասվում է, ապա հաճախ այն դիտվում է որպես բացահայտիչ (Adjektiv-Apposition, determinative Apposition): Այստեղ, իհարկե, նկատի չի առնվում բացահայտչային գործառույթը, այլ զուտ տվյալ դիրքը, ինչպես նաև տրոհման առկայությունը (հետադաս ածականական որոշիչը մեծ մասամբ տրոհվում է որոշյալից ստորակետով), որը բնորոշ է բացահայտչին ընդհանրապես, քանի որ ածականը այստեղ պահպանում է իրեն բնորոշ որոշչային գործառույթը¹⁷: Հետադասության դեպքում ածականը չի համաձայնում գոյականական անդամի հետ: Այսպիսով՝ որոշիչը կարող է դրվել որոշյալից հետո, երբ այն արտահայտված է

¹⁵ Տե՛ս **Duden** 4, նշվ. աշխ., էջ 349:

¹⁶ Տե՛ս **Ch. Dürscheid**, *Syntax, Grundlagen und Theorien*, Wiesbaden, 2000, էջ 82:

¹⁷ Տե՛ս **H. Weinrich**, նշվ. աշխ., էջ 530:

չթեքված ածականով, որը կարելի է նաև փոխարինել որոշիչ երկրորդական նախադասությամբ, կամ էլ դարձնել նախադաս: Օրինակ՝ Und kleine Antonie, *achtjährig und zartgebaut*, in einem Kleidchen aus ganz leichter changierender Seide... «Եվ փոքրիկ Անտոնին, ութամյա և նրբակազմ, բոլորովին թեթև գույնզգույն մետաքսից զգեստով» (TM, 7) (նախադաս՝ Und kleine *achtjährige und zartgebaut* Antonie..., II-ական նախադասություն՝ Und kleine Antonie, die *achjährig und zartgebaut* ist, ...):

Չթեքված ածականով որոշիչը հետադաս է լինում ավելի հաճախ գիտական, գիտատեխնիկական բնույթի տեքստերում, գեղարվեստական գրականության մեջ (ինչպես արձակում, այնպես էլ քնարերգության, հատկապես համեմատություններ կատարելիս), մանուկում, գովազդային տեքստերում, բաղադրատոմսերում և այլն: Օրինակ՝

1) բաղադրատոմսից՝ etwas Majoran, *frisch oder getrocknet* (մի քիչ սուսամբար/մայրամ, թարմ կամ չորացրած); Paprika, *edelsüß* (պղպեղ, բաղցր)¹⁸,

2) գեղարվեստական գրականությունից՝

Blumen, kühne Wunderblumen,

Blätter, *breit und fabelhaft*,

Duftig bunt und hastig regsam,

Wie gedrängt von Leidenschaft¹⁹ (HH, 38),

Wär Melpomene ein Mädchen, *gut, gefühlvoll und natürlich*,

Riet ich ihr: Heirate diesen, der so milde und so zierlich...²⁰ (HH, 98),

...das Bild von Hannes Urgroßvater, wie er selbst ihn als Knabe gekannt – ein heller Kopf, *joyial, einfach, humoristisch und stark*... «Հաննեի նախապապի նկարը, ինչպիսին հենց ինքը գիտեր նրան դեռ իր պատանեկությունից՝ մի լուսավոր գլուխ՝ մարդամոտ, պարզ, հունորով և ուժեղ...» (TM, 522),

3) մանուկից՝ Er ist ein hochbegabter Redner, sehr gebildet und *schlagfertig*. «Նա տաղանդավոր ճառասաց է՝ լավ կրթված ու հնարամիտ» (Die Zeit, № 52, 22.12.2010),

4) գովազդից՝ Betreff *neu*՝ «վերնագիր նոր» (neuer Betreff); Spülmaschine *funktionsfähig*, nicht sehr *sauber*՝ «սպասք լվանալու մեքենա՝ սարքին, ոչ շատ մաքուր» (*funktionsfähige*, nicht sehr *saubere* Spülmaschine); Lieferung *kostenlos*՝ «առաքումն անվճար» (*kostenlose* Lieferung)²¹:

Այս շարադասությամբ ածականական որոշիչները ձեռք են բերում որոշակի քերականական ինքնուրույնություն՝ թեթևացնելով և արտահայտիչ դարձնելով որոշյալի դաշտը, ինչպես նաև տալով փոխակերպման հնարավորություն:

¹⁸ Տե՛ս E. G. Baur, M. Arndt, *Rezepte aus Deutschland*, Stuttgart, 1997, էջ 155:

¹⁹ Թարգմ.՝ «Ծաղիկներ, թավ զարմանալի ծաղիկներ, Տերևներ՝ լայն ու հեքիաթային, Անուշահոտ գույնզգույն ու հապշտապ շարժուն, Ասես՝ նեղված տառապանքից»:

²⁰ Թարգմ.՝ «Լինելը Մելպոմենեն մի աղջնակ՝ բարի, զգացմունքային ու բնական, Կսուրայի նրա մոտ. Ամուսնացիր նրա հետ, նրա՝ այսքան մեղմ ու այսքան քնքուշ»:

²¹ Տե՛ս www.amazon.de

Չթեքվող ածականով արտահայտված որոշիչները իրենց հետադաս կիրառությունը պահպանել են գեղարվեստական գրականությանը, երգերի տեքստերին բնորոշ մասամբ հնացած կայուն կապակցություններում, որոնք ավելի շուտ համարվում են առանձին բառեր կամ բառային միավորներ²²: Օրինակ՝ *Röslein rot*, *Karpfen blau*, *Hänschen klein* և այլն: Կիրառության հենց այս ձևն էլ օգտագործում է արդի գովազդի լեզուն:

Որոշ դեպքերում հետադաս կարող են լինել նաև թեքված ածականներով արտահայտված որոշիչները: Նման կիրառության հանդիպում ենք ոչ միայն մասնագիտական, գեղարվեստական գրականության մեջ, այլև առօրյա-խոսակցական լեզվում: Այս դեպքում գործ ունենք գեղչված կառույցի հետ (ածականական որոշիչը որոշյալից հետո դնելով կարելի է խուսափել գոյականի կրկնությունից)²³: *Männer, auch ältere, haben an diesem Krieg teilgenommen*²⁴ (= *Männer, auch ältere Männer*). *Medikamente, besonders schmerzstillende, können Arzneiabhängigkeit verursachen*²⁵ (= *Medikamente, besonders schmerzstillende Medikamente*): Այսպիսով, թեքված ածականով որոշիչը հետադաս է լինում, երբ կապակցության մեջ որոշյալը անորոշ է՝ դրված հոգնակի թվով: Ըստ Յ. Վայնրիխի՝ այս դեպքում հատկապես կիրառվում են որոշակի ածականներ. ընդունված են մասնավորապես այն բազմակի ածականական որոշիչները, որոնք հակադիր իմաստներ ունեն²⁶: Օրինակ՝ *Heute gibt es viele Sendungen, gute und schlechte, interessante und langweilige*. «Այսօր կան շատ հաղորդումներ՝ լավ և վատ, հետաքրքիր և ձանձրալի»:

Շատ քիչ դեպքերում է, որ որոշյալը ի հայտ է գալիս որոշյալ հոդով, վերջինս ածականներից առաջ կրկնվում է: Օրինակ՝ *Die weitere Entdeckung, die neuere, gewann an Interesse*. «Հաջորդ հայտնագործությունը, ավելի նորը, հետաքրքրություն առաջացրեց»: Նման կիրառության դեպքում ածականից առաջ կարող են երբեմն դրվել ստացական, ցուցական հոդեր կամ այլ բառեր, ընդ որում՝ վերջիններս պահպանում են համաձայնեցումը թվով, սեռով և հոլովով: Օրինակ՝ *Die Kritiker, diese pedantischen, wissen alles besser*. «Քննադատները, այս մանրախնդիր, ամեն ինչ ավելի լավ գիտեն»: Ընդհանուր առմամբ ածականի նման հետադաս կիրառությունը ավելի հաճախ լինում է գրավոր խոսքում: Բանավոր խոսքում նման դեպքերի հանդիպում ենք, երբ խոսքը հուզական բնույթ է կրում՝ դրական կամ բացասական երանգավորմամբ (գովեստներում կամ հայիոյանքներում)²⁷:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ որոշիչը, երկու լեզուներում էլ կատարելով նույն գործառնությունը, տարբերվում է ածականի և գոյականական անդամի համաձայնեցման տեսակետից, որը կարևոր հանգամանք է վերջինիս շարադասության հարցում: Հայերենում ածականը չի թեքվում, իսկ գերմանե-

²² Տե՛ս **G. Helbig, J. Buscha**, Deutsche Grammatik, Ein Handbuch für den Ausländerunterricht, Leipzig, 1999, էջ 598:

²³ Տե՛ս **Duden 4**, նշվ. աշխ., էջ 349:

²⁴ Թարգմ.՝ «Տղամարդիկ, նաև տարեցները, մասնակցել են այդ պատերազմին»:

²⁵ Թարգմ.՝ «Դեղորայքը, հատկապես ցավազրկող, կարող է դեղորայքային կախում առաջացնել»:

²⁶ Տե՛ս **H. Weinrich**, նշվ. աշխ., էջ 532-533:

²⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 533:

րենում որոշիչ են դառնում ածականի ինչպես թեքված, այնպես էլ չթեքված ձևերը: Երկու լեզուներում էլ ածականական որոշիչի համար սովորական է առաջադասությունը: Այն հետադասվում է հիմնականում գեղարվեստական գրականության, առավելապես՝ քնարերգության մեջ, ինչպես նաև գիտական, տեխնիկական և այլ մասնագիտական գրականության մեջ: Հատկանշական է նաև այն, որ հայերենում, կախված շարահասությունից, ածականական որոշիչը տրոհվում է որոշյալից, իսկ գերմաներենում տրոհում լինում է հիմնականում համարժեք ածականների և հետադաս ածականական որոշիչների դեպքում:

ШАГАНЕ НЕРСИСЯН – *Порядок прилагательного-атрибута в современном армянском и немецком языках.* – В статье сравниваются позиционные особенности прилагательного-атрибута в современном армянском и немецком языках. Место атрибута в словосочетании зависит от его принадлежности к той или иной части речи, а также от способа сочетания с определяемым словом, что выявляет в обоих языках особенности его позиции. Атрибут, выполняя одинаковую функцию и в армянском, и в немецком, отличается согласованием прилагательного и субстантивного члена. Прилагательное-атрибут в обоих языках может стоять как перед согласуемым словом, так и после него. Как в армянском, так и в немецком для прилагательного-атрибута характерно место перед определяемым словом. В постпозиции оно стоит главным образом в художественной (лирика), а также научной и вообще специализированной литературе. Примечательно также, что в армянском языке в зависимости от порядка слов прилагательное-атрибут обособляется от определяемого слова, а в немецком обособление происходит в случае равноценных прилагательных и постпозитивных прилагательных-атрибутов.

SHAHANE NERSISYAN – *The Position of Adjectival Attribute in Modern Armenian and German.* – The present article refers to the problem of the position of adjectival attributes in modern Armenian and German. The position of attributes depends on the pertinence of the adjective given to this or that part of speech, as well as on the way of syntactic linkage with the noun modified of specific peculiarities in both languages from the perspectives of the position of word order.

The attributes in both languages, having the same functions, differ from the viewpoint of the concord between adjective and noun, which is of considerable importance for the attributive position. In both languages the attribute may precede and follow the noun.

In both languages the antecedent position is typical of adjectival attributes. The postpositional attributive patterns are recurrent in literary fiction (lyrical poetry), as well as in scientific, technical and other specialized. It is also characteristic the fact that in Armenian, depending on the word order, the adjectival attribute is segmented from the noun modified, while in German the isolation proceeds mainly in cases of equivalent and postpositional adjectives. The author has made an attempt to trace parallels between the positional peculiarities of adjectives in Armenian and German.

Համառոտագրություններ

ԱԲ - **Ա. Բակունց**, Երկեր, Երևան, 1985:

ՎՊ – **Վ. Պետրոսյան**, Ընտիր երկեր, հ. 1, Երևան, 1983:

ՎԱ - **Վ. Անանյան**, Երկեր, հ. 3, 4, Երևան, 1984:

ՊՍ – **Պ. Սևակ**, Եղիցի լույս, Երևան, 1992:

ՀՍ – **Հ. Սահյան**, Երկեր, հ 1, Երևան, 1984:

EK - **E. Kästner**, Drei Männer im Schnee, 2006:

HH – **H. Heine**, Dichterische Prosa, Dramatisches, München, 1993:

RK – **Rusch Klaudia**, Meine freie deutsche Jugend, Frankfurt am Main, 2005:

TM – **T. Mann**, Buddenbrooks, Frankfurt am Main, 2005:

WG – **J. W. Goethe**, Deutsche Gedichte, Eine Anthologie, hrsg. von D. Bode, Stuttgart, 2006: